ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հուլիսի 2023 թվականի N 1281 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 1689-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեին գույք ամրացնելու, անհատույց օգտագործման իրավունքով գույք հանձնելու և նվիրաբերելու, ինչպես նաև «Ձրառ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու մասին» N 1689-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ծրագրերի շրջանակներում նոր կառուցված հիդրոտեխնիկական կառուցվածքները՝».

2) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) որպես պետական գույք ներդնել «Ձրառ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում՝ լրացուցիչ բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման միջոցով ավելացնելով ընկերության կանոնադրական կապիտալը՝ համաձայն N 1 հավելվածի.».

3) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետը «անհատույց» բառից առաջ լրացնել «ամրացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեին և» բառերով.

4) որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետում և 6-րդ կետում «Ձառիթափ» բառը փոխարինել «Վայք» բառով.

5) որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետը «տեղաբաշխման» բառից առաջ լրացնել «թողարկման և» բառերով.

6) որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) վերականգնման աշխատանքների արժեքի չափով ավելացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեում հաշվառված համապատասխան գույքի արժեքը՝ համապատասխանաբար փոփոխություններ կատարելով ջրօգտագործողների ընկերություններին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված գույքերի ցանկերում՝ համաձայն N 5 հավելվածի.».

7) որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) վերականգնման աշխատանքների արժեքի չափով ավելացնել համայնքային սեփականություն հանդիսացող և ջրօգտագործողների կողմից շահագործվող գույքի հաշվեկշռային արժեքը, և գույքը նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու համար նվիրաբերել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքին (Գառնի և Հացավան բնակավայրեր)՝ համաձայն N 6 հավելվածի:».

8) որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) որպես պետական գույք ներդնել «Ձրառ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում՝ լրացուցիչ բաժնետոմսերի թողարկման

և տեղաբաշխման միջոցով ավելացնելով ընկերության կանոնադրական կապիտալը՝ համաձայն N 7 հավելվածի.».

9) որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետից հանել «նվիրաբերել» բառը, իսկ «ջրօգտագործողների» բառից առաջ ենթակետը լրացնել «ամրացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեին և անհատույց օգտագործման իրավունքով հանձնել» բառերով.

10) ուժը կորցրած ճանաչել որոշման 5-րդ կետը.

11) որոշումը 5-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5.1-ին և 5.2-րդ կետերով.

«5.1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո, մինչև 2024 թվականի ապրիլի 30-ը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշման NN 1, 4, 7 հավելվածներում նշված գույքի արժեքի չափով լրացուցիչ բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման միջոցով «Ձրառ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալին ավելացման գործընթացը:

5.2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո, մինչև 2024 թվականի ապրիլի 30-ը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել՝

1) սույն որոշման NN 1, 4, 7 հավելվածներում նշված գույքի հանձնման-ընդունման գործընթացը.

2) սույն որոշման NN 2, 5, 8 հավելվածներում նշված գույքին համապատասխանաբար՝ անհատույց օգտագործման պայմանագրերի կնքման, գույքերի ցանկերում համապատասխան փոփոխություններ կատարելու, հանձնման-ընդունման և մնացած անհրաժեշտ գործընթացները.

3) սույն որոշման NN 3, 6 հավելվածներում նշված գույքի նվիրաբերության պայմանագրերի կնքման և հանձնման-ընդունման գործընթացը, նշված համայնքների

հետ համագործակցությունը գույքի նվիրաբերության գործընթացը կազմակերպելու համար, իսկ վերջիններիս կողմից նվիրաբերության ընդունումից հրաժարվելու դեպքում ներկայացնել համապատասխան առաջարկություններ.

4) սույն որոշման N 9 հավելվածում նշված գույքի ամրացման նպատակով հանձնման-ընդունման գործընթացը՝ հետագայում առաջարկություններ ներկայացնելու նպատակով.

5) սույն որոշմամբ հանձնվող գույքերի՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության անունից պայմանագրերի կնքման, հանձնման-ընդունման, պայմանագրերի նոտարական վավերացման, պայմանագրերից բխող գույքային իրավունքների պետական գրանցման աշխատանքների կատարումը:».

12) որոշման 6-րդ կետը «նոտարական ծախսերը» բառերից հետո լրացնել «, գույքերի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը, գույքերի չափագրումը» բառերով, իսկ «համայնքի» բառից հետո՝ «ու Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի» բառերով:

2. Որոշման հավելվածներում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի.

2) N 2 հավելվածի վերնագիրը «ՀԱՆՁՆՎՈՂ» բառից հետո լրացնել «ՆՈՐ» բառով, ցանկի 5-րդ կետը «ՆԿ 78+00-ից մինչև վերջ» բառերից առաջ լրացնել «ՆԿ 00+00 մինչև ՆԿ 78+00 և» բառերով, իսկ «1022866129» թիվը փոխարինել «2035150129.85» թվով.

3) N 3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 2 հավելվածի.

4) N 4 հավելվածի ցանկը «Գեղարդալճի պատվարի վերակառուցում» բառերից հետո լրացնել «, և Գեղարդալճի ինքնահոս համակարգ (1.925 կմ և 31.466 կմ հատվածներ)» բառերով, իսկ «1376252860» թիվը փոխարինել «3851624980.30» թվով.

5) N 4 հավելվածի վերնագիրը «տեղաբաշխման» բառից առաջ լրացնել «թողարկման և» բառերով.

6) N 6 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 3 հավելվածի.

7) N 7 հավելվածի վերնագիրը «ԼՐԱՑՈՒՑԻՉ ԲԱԺՆԵՏՈՄՄԵՐԻ» բառերից հետո լրացնել «ԹՈՂԱՐԿՄԱՆ ԵՎ» բառերով.

8) N 8 հավելվածի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻՆ ԱՄՐԱՑՎՈՂ ԵՎ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

27.07.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ